Հովհաննես Թումանյան

Երկու հոգի

Մարդիկ կյանքում իրար համար
Ամեն մի տեղ ու ամեն օր՝
Որը ուժեղ, որը տըկար՝
Կամ պաշտպան են կամ պրոկուրոր:

Մինը գիտի լոկ չար վայրկյան
Եվ չարագործ ու թըշնամի,
Մյուսը հոգին հավերժական
Ու պատճառը դժբախտ ժամի:

Մինն իր առջև տեսնում է ցած

Մի հանցավոր խավար ու կույր,
Մյուսը՝ իր պես մի արարած,
Ծընող, որդի, եղբայր կամ քույր...

Մինը մարդու օրենքն ունի,
Որ միշտ մարդուն ցավ է բերում,

Մյուսը մարդու և Անհունի,
Որ և անհուն սեր է բուրում:

Եվ օրհնեալ է, ով այդ սիրով
Կյանքի ճամփում ընկնող մարդուն
Պաշտպանում է եղբոր ձեռով,

Տանում դեպի խաղաղություն:

Եվ խաղաղ է նրա հոգին
Կյանքի ամեն ասպարիզում,
Եվ թե երբեք հուզվում է նա,
Սերն է միայն նրան հուզում:

Ահա ինչու էս աշխարհքում
Խաղաղ է միշտ և իմ հոգին,
Պաշտպանում է նա իր խորքում,
Սիրում է ողջ ու ամենքին:

1912